# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ գ. Գեղանիստ

ՀԵՌ. 093-89-97-37

E-mail geghanist.shirak@mta.gov.am

« 23 » **դեկտեմբերի 2016թ.**

N: 259

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ՀՈՎՍԵՓ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 27-Ա, 28-Ա, 29-Ն, 30-Ա և դեկտեմբերի 20-ի թիվ 31-Ն որոշումները:

Առդիր՝ 20 թերթ:

Գեղանիստ համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 13237-16
23. 12 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27-Ա

28 նոյեմբերի 2016թ. գ. Գեղանիստ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի վարձատրության չափը սահմանել ՀՀ Աժ պատգամավորի աշխատավարձի նկատմամբ 28.72%-ի չափով՝ 190.000 (մեկ հարյուր իննսուն հազար)դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Գեղանիստ համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Բաղդասարյան Սողոմոն | | | |
| 2. Երանոսյան Ռուբեն | | | |
| 3. Ղազարյան Արմեն | | | |
| 4. Ղազարյան Սամվել | | | |
| 5. Սարիբեկյան Լյովա | | | |

Գեղանիստ համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյան

«2» դեկտեմբերի 2016թվական
գ. Գեղանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ա

28 նոյեմբերի 2016թ. գ. Գեղանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի քանակը՝ 9 (ինը) միավոր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 34-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 18-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Գեղանիստ համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Բաղդասարյան Սողոմոն | | | |
| 2. Երանոսյան Ռուբեն | | | |
| 3. Ղազարյան Արմեն | | | |
| 4. Ղազարյան Սամվել | | | |
| 5. Սարիբեկյան Լյովա | | | |

Գեղանիստ համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյան

«2» դեկտեմբերի 2016թվական
գ. Գեղանիստ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գեղանիստ համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28 -ի թիվ 28-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը - 9

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 126000 | 66.31 | 1 | 126000 | 126000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 130000 թափուր | 68.42 | 1 | 130000 | 130000 |
| 3 | Առաջին կարգի մասնագետ-հաշվապահ (3.2-1) | 1 | 126000 | 66.31 | 1 | 126000 | 126000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ (3.2-2) | 1 | 126000 | 66.31 | 1 | 126000 | 126000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ-գանձապահ (3.3-1) | 1 | 115000 | 60.53 | 1 | 115000 | 115000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 6 | Տնտեսվար, ջրբաշխ | 1 | 100000 | 52.63 | 1 | 100000 | 100000 |
| 7 | Գրադարանավար | 1 | 74100 թափուր | 39.0 | 1 | 74100 | 74100 |
| 8 | Հավաքարար | 1 | 74100 | 39.0 | 1 | 74100 | 74100 |
| 9 | Համ. օպերատոր | 1 | 79400 | 41.79 | 1 | 79400 | 79400 |
| Ընդամենը | | 9 | 950.600 | - | 9 | 950600 | 950600 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29-Ն

«28» նոյեմբերի 2016թվական գ. Գեղանիստ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 19-Ն որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Բաղդասարյան Սողոմոն՝ | ---------- | _____ | _____ |
| Երանոսյան Ռուբեն՝ | ---------- | _____ | _____ |
| Ղազարյան Արմեն՝ | ---------- | _____ | _____ |
| Ղազարյան Սամվել՝ | _____ | _____ | _____ |
| Սարիբեկյան Լյովա՝ | _____ | _____ | _____ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**

«_2_» դեկտեմբերի 2016թվական
գ. Գեղանիստ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի
ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի
թիվ 29-Ն որոշման

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար դրամ:
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝վեց հազար դրամ
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնմեկ հազար դրամ
բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ութ հարյուր դրամ
2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հինգ հարյուր դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված

նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. ինը հարյուր դրամ
4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ
զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ իննսուն հազար դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ իննսուն հազար դրամ

5.Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար զրո դրամ

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է քառասուն հազար դրամ

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար մեկ դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ

դ) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

դա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

դբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ
դգ) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար դրամ
դդ) մեկ ամսվա համար՝ տասնհինգ հազար դրամ
դե) մեկ տարվա համար՝ վաթսուն հազար դրամ
5[1]Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար հիսուն հազար դրամ
6.Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ
դ) խաղատների կազմակերպման համար՝ ութ հարյուր հազար դրամ
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ
7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ
գ) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ
դ) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ
7.1.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ մեկ հարյուր քսանհինգ դրամ:
7.2.Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հիսուն դրամ:
8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է զրո դրամ
Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ
9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ
9.1.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է զրո դրամ
10.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ
բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն ՀՀ դրամ
գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն ՀՀ դրամ
դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝
տասը միլիոն ՀՀ դրամ

***Տեղական վճարների դրույքաչափեր***

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. չորս հազար դրամ
2.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. տասը հազար դրամ
3.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար. մեկ հազար դրամ
4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է.
կենցաղային աղբի համար՝
4.ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝ մեկ հարյուր դրամ
5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար.
ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
5.ա) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ մեկ հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30-Ա

«28» նոյեմբերի 2016 թվական գյուղ Գեղանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Բաղդասարյան Սողոմոն՝ | | | |
| Երանոսյան Ռուբեն՝ | | | |
| Ղազարյան Արմեն՝ | | | |
| Ղազարյան Սամվել՝ | | | |
| Սարիբեկյան Լյովա՝ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**

«2» դեկտեմբերի 2016թվական
գ. Գեղանիստ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի
ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի
թիվ 30-Ա որոշման

# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿ

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

| | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԻ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՇՎԵԿՇ. ԱՐԺԵՔԸ | Փաստացի ֆիզիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| | գյուղապետարանի վարչական շենք | 1 | 1105488 | վթարային |
| | կուլտուրայի տուն | 1 | 2176429 | վթարային |
| | ջրագծի ներքին ցանց | 1 | 1087569 | |
| | բուլդոզեր տրակտոր ԴՏ-75 | 1 | 325280 | անսարք |
| | ավտ. ՈՒԱԶ 469 ու | 1 | 76002 | անսարք |
| | տրակտոր Տ-40 ԱՆՄ | 1 | 213059 | անսարք |
| | ռեզերվուար 10 տ | 1 | 31093 | |
| | ռեզերվուար 3 տ | 1 | 13473 | |
| | կշեռք լծակավոր 500 կգ | 1 | 2418 | |
| | երկաթյա պահարան | 1 | 16940 | |
| | գրասեղան | 4 | 340000 | |
| | աթոռ | 2 | 45000 | |
| | Պահարան | 1 | 100000 | |
| | համակարգիչ | 2 | 899700 | |
| | գրադարան, գրականություն | 7151 | | |
| | պահարան | 1 | | |
| | Ցուցափեղկ | 2 | | |
| | կատալոգի արկղ | 1 | | |
| | գրասեղան | 5 | | |
| | սեղան դիմադիր | 1 | | |
| | էտաժերկա | 1 | | |
| | գրադարակ | 15 | | |
| | աթոռ | 5 | | |
| | աստիճան | 1 | | |
| | կուլտուրայի տան գույք | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ռադիոհանգույց | 1 | | |
| | ձայնագրիչ | 1 | | |
| | հնչյունային կալոնկա | 1 | | |
| | խոսափող | 1 | | |
| | գրասեղան | 1 | | |
| | վարագույր | 3 | | |
| | պահարան | 2 | | |
| | էլ. դաշնամուր | 1 | | |
| | էլ. արգամ | 1 | | |
| | տրասֆորմատոր | 2 | | |
| | դիսկոկոմպլեկտ | 1 | | |
| | ֆոտոապարատ | 1 | | |
| | քանոն | 1 | | |
| | քամանչա | 1 | | |
| | դուդուկ | 3 | | |
| | նարդի | 1 | | |
| | շախմատ | 1 | | |
| | դահլիճի նստարան | 200 | | |
| | աթոռ | 7 | | |
| | սեղան | 2 | | |

*Գեղանիստի համայնքի*
*ղեկավար՝* *Ա. Ղազարյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ն

«20» դեկտեմբերի 2016թվական գ. Գեղանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի ավագանին

Որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | Կողմ՝__ | Դեմ՝__ | Ձեռնպահ՝__ |
|---|---|---|---|
| Բաղդասարյան Սողոմոն՝ | | | |
| Երանոսյան Ռուբեն՝ | | | |
| Ղազարյան Արմեն՝ | | | |
| Ղազարյան Սամվել՝ | | | |
| Սարիբեկյան Լյովա՝ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**

«20» դեկտեմբերի 2016թվական գ. Գեղանիստ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստ
համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբեր 20-ի 31-Ն որոշման

# Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտները

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ/հազ. դրամ/ | ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ/հազ. դրամ/ | ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ/հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 2400.0 | 2400.0 | 0 |
| 2 | Գույքահարկ | 3169.4 | 3169.4 | 0 |
| 3 | Տեղական տուրք | 120.0 | 120.0 | 0 |
| 4 | Դոտացիա | 22375.6 | 22375.6 | 0 |
| 5 | Վարձակալական հողերի հարկ | 445.6 | 445.6 | 0 |
| 6 | Ընդհամենը | 28510.6 | 28510.6 | 0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀՈԴՎԱԾԸ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ/հազ. դրամ/ | ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ/հազ. դրամ/ | ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ/հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 4111 | 13000.0 | 13000.0 | 0 |
| 2 | Էլ. էներգիա | 4212 | 1200.0 | 1200.0 | 0 |
| 3 | Կոմունալ ծառայություն | 4213 | 2300.0 | 2300.0 | |
| 4 | Կապի ծառայություն | 4214 | 300.0 | 300.0 | |
| 5 | Գույքի վարձակալություն | 4216 | 800.0 | 800.0 | |
| 6 | Գործուղում | 4221 | 250.0 | 250.0 | |
| 7 | Համակարգչային ծառայություն | 4232 | 250.0 | 250.0 | 0 |
| 8 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 4234 | 150.0 | 150.0 | 0 |
| 9 | Ընդհ. բնույթի հանրային ծառայություններ | 4235 | 500.0 | 500.0 | 0 |
| 10 | Այլ մշակութային ծառայություններ | 4239 | 800.0 | 800.0 | 0 |
| 11 | Շենքերի և կառ. ընդհանուր նորոգ. | 4251 | 3500.0 | 3500.0 | 0 |
| 12 | Մեքենաների և սարք. վերանորոգում | 4252 | 600.0 | 600.0 | 0 |
| 13 | Գրասենյակային նյութեր | 4261 | 200.0 | 200.0 | 0 |
| 14 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 800.0 | 800.0 | 0 |
| 15 | Մաքրող նյութեր | 4267 | 250.0 | 250.0 | 0 |
| 16 | Հատուկ նպատակային նյութեր | 4269 | 800.0 | 800.0 | 0 |
| 17 | Այլ նպաստ. բյուջեից | 4729 | 700.0 | 700.0 | 0 |
| 19 | Պահուսային ֆոնդ | 4891 | 2110.6 | 2110.6 | 0 |
| Ընդամենը | | | | 28.510. 6 | |

Գեղանիստի համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| h/h | Ծախսեր գործառնական և տնտեսագիտական | | Ընդամենը բյուջե | Վարչական մաս | Ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| | 01.0.0 | | 18900.0 | 18900.0 | 0.0 |
| | Ընդհանուր բնույթ. 01.1.0 | | 18000.0 | 18000.0 | 0.0 |
| 1 | Աշխատավարձ 4111 | | 13000.0 | 13000.0 | 0.0 |
| 2 | Էլեկտրաէներգիա 4212 | | 800.0 | 800.0 | 0.0 |
| 3 | Գույքի վարձակալություն 4216 | | 800.0 | 800.0 | 0.0 |
| 4 | Կապի ծառայություն 4214 | | 300.0 | 300.0 | 0.0 |
| 5 | Գործուղում 4221 | | 250.0 | 250.0 | 0.0 |
| 6 | Գյուղապետարանի շենքի նորոգում 4251 | | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| 7 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում 4252 | | 600.0 | 600.0 | 0.0 |
| 8 | Գրասենյակային նյութեր 4261 | | 200.0 | 200.0 | 0.0 |
| 9 | Տրանսպորտային նյութեր 4264 | | 800.0 | 800.0 | 0.0 |
| 10 | Հատուկ նպատակային նյութեր 4267 | | 250.0 | 250.0 | 0.0 |
| | 01.3.0 | | 400.0 | 400.0 | 0.0 |
| 1 | Համակարգչային ծառ. 4232 | | 250.0 | 250.0 | 0.0 |
| 2 | Տեղեկատվական ծառ. 4234 | | 150.0 | 150.0 | 0.0 |
| | 01.6.0 | | 500.0 | 500.0 | 0.0 |
| 1 | Ընդհանուր բնույթի այլ ծառ. 4235 | | 500.0 | 500.0 | 0.0 |
| | Տնտեսական 04.0.0 | | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| | 04.5.0 Տրանսպորտ | | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| | 04.5.0 Ճանապարհներ | 4213 | 500.0 | 500.0 | 0.0 |
| | | 4251 | 500.0 | 500.0 | 0.0 |
| 1 | Ոռոգում | 4213 | 500.0 | 500.0 | 0.0 |
| | | 4251 | 500.0 | 500.0 | 0.0 |
| | Շրջակա միջ. 05.0.0 | | 800.0 | 800.0 | 0.0 |
| 1 | Աղբահանում 05.1.0 | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | Աղբահանում 4213 | | 800.0 | 800.0 | 0.0 |
| | Բնակ. Կոմունալ 06.0.0 | | 1800.0 | 1800.0 | 0.0 |
| 1 | 06.3.1Ջրամատակարարում | | 1000.0 | 1000.0 | 0.0 |
| 2 | Ջրամատակարարում 4213 | | 500.0 | 500.0 | 0.0 |
| | Խմելու ներքին ցանցի նորոգում 4251 | | 500.0 | 500.0 | 0.0 |
| | 06.4.1 Փողոցների լուս. | | 800.0 | 800.0 | 0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրաէներգիա 4212 | 400.0 | 400.0 | 0.0 |
| 2 | Շենքերի և շինությունների կառուցում 4251 | 400.0 | 400.0 | 0.0 |
| | Հանգիստ 08.0.0 | 2200.0 | 2200.0 | 0.0 |
| 1 | Ընդհանուր բնույթի այլ 4239 | 800.0 | 800.0 | 0.0 |
| 2 | Հատուկ նպատակային նյութեր 4269 | 800.0 | 800.0 | 0.0 |
| | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում 08.2.7 | 600.0 | 600.0 | 0.0 |
| 1 | Շենքերի և շինությունների կառուցում 4251 | 600.0 | 600.0 | 0.0 |
| | Կրթություն 09.0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | 09.2.2 Միջնակարգ կրթ. | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1 | Հատուկ նպատակային նյութ 4269 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | 10.7.1 Այլ նպաստներ 4729 | 700.0 | 700.0 | 0.0 |
| | 11.0.0 Պահուստային ֆոնդ | 2110.6 | 2110.6 | 0.0 |
| | Պահուստային ֆոնդ 4891 | 2110.6 | 2110.6 | 0.0 |
| | Ընդամենը ծախսեր | 28.510.6 | 28.510.6 | 0.0 |

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ